Աֆսանեհ Շիրանի
Մոհամմադ Մալեք-Մոհամմադի
բ.գ.թ., դոցենտ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՀՀ-Ի ՄՈՏԵՑՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Հայաստան, Իրան, Հայոց ցեղասպանություն, հայ-թուրքական հարաբերություններ, ԼՂՀ հակամարտություն

Հայաստանի և Թուրքիայի հակամարտությունը կովկասյան տարածաշրջանի վաղեմի և հիմնական հակամարտություններից մեկն է համարվում, որի առաջին նախանշանները հայտնի դարձան Թուրքմենչայի պայմանագրից (1828, փետրվարի 10 (22)) հետո, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի քաղաքական զարգացումների և 1915 թ. ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանությամբ հասավ իր գագաթնակետին:

ՀՀ և Թուրքիայի փոխհարաբերություններին առնչվող հրատապ թեմայի հետ կապված երկու երկրների համադրությունը և հակադրությունը, խնդրո առարկա փոխհարաբերությունների տարածաշրջանային առաջնահերթությունը և կարևորագույն նշանակությունը ենթադրում են, որ հիմնահարցը գերաճում է զուտ տեղական շրջանակներից և երևակվում աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում:

Կողմերի տարաձայնություններն ընդհանուր պատմական անցյալի շուրջ, տարածքային վեճերի և փոխադարձ վստահության պակասի պատճառներով, առ այսօր հայ-թուրքական հակամարտությունը պահում են աշխարհի չլուծված հակամարտությունների շարքում:

Հայ-թուրքական հակամարտությունը

Հայ-թուրքական հակամարտության հիմնական տարաձայնությունը վերաբերում է 1915 թ. իրադարձություններին, որոնք թուրքական կողմի տեսանկյունից համարվում են քա-

ղաքացիական հասարակությունների վեճերի արդյունքում բռնի տեղահանումներ, սակայն հայկական կողմի տեսանկյունից՝ ծրագրված ցեղասպանություն: Թուրքիան վաղուց ձգտում է դուրս բերել ցեղասպանության հարցը միջազգային քաղաքականության ասպարեզից: Թուրքիայի նախկին վարչապետ Էրդողանը այդ կապակցությամբ հայտարարել է, որ «ցեղասպանության վերաբերյալ մեղադրանքները պետք է լուծվեն պատմաբանների միջոցով, այլ ոչ թե խորհրդարաններում»: Սակայն երկխոսության իրականացման, փոխադարձ վստահությունը վերականգնելու համար պատմական հարթության վրա հանձնաժողովի ստեղծումը, ըստ հայկական կողմի, Թուրքիային հնարավորություն է տալիս վիճարկելու կայացած ցեղասպանությունը:

Հայերի զգացմունքներն ու ձգտումները Արևմտահայաստանի տարածքների նկատմամբ, Հայաստանի խուսափումը՝ ճանաչելու իր արևմտյան սահմանը Թուրքիայի հետ, այն հիմնական հանգամանքներն են, որոնք խորը մտահոգությունն են պատճառել Թուրքիային՝ լիովին հրաժարվելու մոտ ապագայում Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելուց:

Այս համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը առաջնահերթություն են կազմում: Իսկ ըստ քաղաքագետների՝ նոր աշխարհակարգի և միջազգային հարաբերությունների ասպարեզում, անշուշտ, «ՀՀ (+ԼՂՀ) զարգացմանն ու հետագա ամրապնդմանը համընթաց, կմեծանա հայկական գործոնի կշիռը տարածաշրջանային և, ինչու չէ, աշխարհակարգի հաստատման գործընթացներում: Եվ այն լիարժեքորեն դրսևորվում է տարածաշրջանի երկրաքաղաքական վերադասավորումներում, ռազմական հաշվեկշիռներում, հաղորդակցական գործընթացներում, քաղաքակրթական երկխոսություն-դիմակայություններում»[1]:

---

[1] Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը /երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ/, Երևան, 2010, էջ 153:

Հայոց ցեղասպանությո՞ւն, թե՞ Մեծ եղեռն

1915 թվականին ավելի քան մեկուկես միլիոն հայերի ջարդերի վերաբերյալ, որ իրականացվել է սպանությունների, հիվանդության, բռնագաղթի հետևանքով, կողմերի մի շարք վերլուծաբանները և հեղինակները համակարծիք են: Համացանցային ներողության արշավի ընթացքում ազգությամբ թուրք մտավորականության կողմից Մեծ եղեռն տերմինի կիրառումը փոխըմբռնման մեկ այլ նշան էր[2]:

Թուրքական պաշտոնական տեսակետի համաձայն հայերը Առաջին համաշխարհային պատերազմում հանդես են եկել որպես «հինգերորդ շարասյուն» աջակցելով Ռուսաստանին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, մտադիր էին «Անատոլիայի» սրտում ստեղծել անկախ պետություն: Սակայն հայերն այն կարծիքին են, որ այդ տարիների իրենց ազգակիցները եղել են հավատարիմ քաղաքացիներ, իսկ նրանց բռնագաղթը և ջարդերը նպատակ ունեին բարենպաստ պայմաններ ստեղծել Օսմանյան կայսրության նախկին տարածքներից տեղափոխված մուսուլման փախստականների համար՝ ստեղծելու միատարր պետություն:

Ցեղասպանության վերաբերյալ իրավաբանական սահմանումները[3] և ԻԻՀ իրավական համակարգը ցեղասպանության մասին

Առաջին իրավական սահմանումը ցեղասպանության մասին բարձրացվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, իսկ

---

[2] Turkey and Armenia: Opening Minds, Opening Borders, Europe Report N°199 – 14 April 2009, p. 9.

[3] http://www.hvm.ir/print.asp?id=34314

بررسی جنایت نسل کشی با نگاه ویژه به جنایات انجام یافته در بحرین، پایگاه الکترونیک معاونت حقوقی و امور مجلس.

http://www.mehrnameh.ir/article/3112/جرم%E2%80%8C-انگاری-دکتر-با-گو%E2%80%8Cو%E2%80%8Cگفت-است-ضرورت-یک--کشی%E2%80%8Cنسل-و--تهران-آزاد-دانشگاه-علمی%E2%80%8Cهیات-عضو-باقري%E2%80%8Cشریعت-محمّدجواد استراتژیک-تحقیقات-مرکز-الملل%E2%80%8Cبین--حقوق-گروه-مدیر

1948թ. ստեղծվել է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիան: Իրանը նույնպես միացել է Միավորված Ազգերի Կազմակերպության 1948 թ. կոնվենցիային: Եվ այսպիսով, ցեղասպանության սահմանումը մտել է Իրանի իրավական համակարգի մեջ, սակայն չի որոշվել քրեական պատասխանատվության կարգը: Քրեական պատասխանատվության կարգն ընդգրկում են հետևյալ երեք բաղադրիչները՝ 1. հանցագործության սահմանումը, 2. իրավասու դատարանի որոշումը, 3. օրենքով սահմանված պատժի որոշումը: Իրանի դատական համակարգում իրականացվել է միայն քրեական պատասխանատվության կարգի առաջին քայլը[4]:

Սուրբ Ղուրանը և ցեղասպանության թեման

Սուրբ Ղուրանում Ahlak Al-nasl اهلاک النسل «սերնդի ոչնչացում» հասկացությունը և ովքեր երկրի վրա չարիք են գործում, իսկ նրանց չարիքները ուղղված են «ցանքսերը» և «սերնդի» ոչնչացմանը, դատապարտված է: Համաձայն որոշ իրավաբանների՝ [5] Ս. Ղուրանի Սուրաթ Ալ-Բաղարայի 204-205 այանները ցեղասպանության մասին են:

«Եվ մարդկանցից, ում խոսքը կյանքում քեզ զարմանք է պատճառում՝ արտաքուստ շատ սիրալիր են: Եվ Աստծուն վկա են կանչում հանուն նրա, ինչ սրտներում ունեն: Մինչդեռ նրանք ամենահամառ թշնամիներն են: Դրա ապացույցն այն է, որ, երբ հեռանում են քո մոտից՝ երկրում չարիք գործելու համար ջանքեր են թափում: Եվ ցանքսերը /բույսերը/ և սերնդին /կենդանիներին/ ոչնչացնում են, թեև գիտեն, որ Աստված չի սիրում չարագործությունը»:

---

[4] Shariat Bagheri, Mohammad Javad, Jorm Engarie Nasl Koshi Yek Zarurat Ast, Majaleye Mehrname, Shomareye 18, Dey mahe 1390, (2011).

[5] http://www.mehrnameh.ir/article/3112/جرم%E2%80%8Cانگاری-دکتر-با-گو%E2%80%8Cو%E2%80%8Cگفت-است-ضرورت-یک--کشی%E2%80%8Cنسل-و--تهران-آزاد-دانشگاه-علمی%E2%80%8Cهیات-عضو-باقري%E2%80%8Cشریعت-محمّدجواد استراتژیک-تحقیقات-مرکز-الملل%E2%80%8Cبین--حقوق-گروه-مدیر

Սուրբ Ղուրանի վերոհիշյալ խոսքում արաբերեն (ha’rs) الْحَرْثَնշանակում է «ցանքս, բույս», իսկ արաբերեն (na’sl) النَّسْلَ նշանակում է «մարդկային և ոչ մարդկային /կենդանիների/ սերունդը»: Ուստի «ցանքսի և սերնդի» ոչնչացումը նշանակում է վերացնել ցանկացած կենդանի էակի՝ թե բուսական, թե կենդանական կամ մարդկային:

Սուրբ Ղուրանի սուրաթ Ալ-Մաեդահի 32-րդ այան շեշտում է.

«Եթե որևէ մեկը սպանել է մի մարդու, որը երկրի վրա չի կատարել սպանություն և չարագործություն, ապա սպանել է ողջ մարդկությանը» :

Սուրբ Ղուրանի մեկնաբան Աիաթ-Ալլահ Ալամե Թաբաթաբային իր Ալմիզան Ս. Ղուրանի մեկնաբանության մեջ հաստատում է, որ Ս. Ղուրանի վերոհիշյալ խոսքերում դատապարտվում է ցեղասպանությունը: Անշուշտ, դատապարտելի է ցանկացած ցեղասպանություն՝ առանց կրոնական և ազգային տարբերակման:

Թուրքիայի ժամանակակից քաղաքականությունը և ռազմավարությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ

Հայ-թուրքական հակամարտությունը գերազանցելով երկկողմ հակամարտության ոլորտը՝ հասել է տարածաշրջանային մակարդակի: Թուրքիան Մերձավոր Արևելքում առանցքային դեր է կատարում և ներգրավված է Լեռնային Ղարաբաղի, Կիպրոսի, հայ-թուրքական հակամարտություններում:

Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան ձգտում էր իրականացնել ազգայնական համաթուրքական (Հարավային Կովկասով դեպի Կենտրոնական Ասիա) ռազմավարության երազանքը Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Սակայն շուտով բախվելու էր իր անկարողությանը և սահմանափակումներին՝ զարգացնելու և ընդլայնելու վերո-

հիշյալ գաղափարախոսությունը: Այս երկիրն Իրանի և Ռուսաստանի հետ մրցակցության երկար պատմություն ունի[6]:

Թուրքիայի և Հայաստանի միջև բանակցությունների տապալումից հետո՝ մոտենալով Հայոց ցեղասպանության հարյուրամյակին, Թուրքիան վերջին երկու տարիների ընթացքում որոշակի փոփոխություններ կատարեց իր ռազմավարության ոլորտում, որ ցույց է տալիս թուրքական կողմի ճկուն և ճարպիկ քաղաքականությունը հակամարտության ամենակարևոր գործոնի՝ ցեղասպանության հարցի վերաբերյալ: Թուրքագետ Ռ. Մելքոնյանը նկատում է. «Թուրքիան փորձում է և փորձելու է ստեղծել տպավորություն, որ պատրաստ է հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, բայց խոստումներից և իմիտացիոն բնույթի քայլերից այն կողմ շոշափելի ու էական քայլեր չեմ ակնկալում»[7]:

Այս առումով, 2014 թ. ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 99-ամյակի առիթով Թուրքիայի նախկին վարչապետ և ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդողանը, առաջին անգամ, իր հայտարարության մեջ Թուրքիայի կառավարության կողմից ցավակցություն է հայտնում 20-րդ դարասկզբին իրենց կյանքը կորցրած հայերի համար: Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը Էրդողանը ձևակերպում է որպես «1915 թվականի իրադարձություններ» և որակում իբրև «ընդհանուր ցավ»: Հայտարարության մեջ ասվում է - «Ապրիլի 24-ը ամբողջ աշխարհի հայերի համար պատմական հարցի շուրջ ազատորեն խոսելու լավ առիթ է: Անվիճարկելի է, որ Օսմանյան կայսրության վերջին տարիները, անկախ կրոնից՝ թուրք, հայ, քուրդ, արաբ և այլ միլիոնավոր մարդկանց համար եղել են դժվարին ժամա-

---

[6] Kulaii, Elahe, Armanestan va Rusiye: Avamele Toseye Ravabet, Majaleye Motaleat Asiaye Markazi va Ghafghaz, Tabestan, 1387 (2008).

[7] Մելքոնյան Ռ., «Թուրքիայում Ցեղասպանության հարցը քննության պես մի խնդիր է դարձել», 2013: - See more at: http://www.mediamax. am/am /news/interviews/7301/#sthash.c29upJ6g.dpuf

նակաշրջան: Ինչպես ասել են մեր նախնիները՝ «կրակն ընկած տեղն է այրում»: Օսմանյան կայսրության ամբողջ բնակչության՝ այդ թվում հայերի ցավը կիսելն ու նրանց հիշողությունները հասկանալը մեր մարդկային պարտքն է»: «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած դեպքերը բոլորիս համատեղ վիշտն են»: Եվ ապա՝ «Առաջին աշխարհամարտի դեպքերի պատճառով տեղի ունեցած տեղահանությունը չպետք է հայերի և թուրքերի միջև մարդկային հարաբերությունների և վարքագծի խոչընդոտ հանդիսանա»[8]:

Հայ-թուրքական հակամարտությունը և ԻԻՀ մոտեցումը

Աշխարհաքաղաքականության տեսանկյունից Իրանի Իսլամական Հանրապետությունը Ադրբեջանի Հանրապետության հետ 700 կմ, իսկ Հայաստանի Հանրապետության հետ մոտ 35 կմ ընդհանուր սահման ունի: Կովկասյան տարածաշրջանը լավագույն շրջաններից մեկն է, որը կարող է ամենալավ չափանիշ լինել ԻԻՀ արտաքին քաղաքականության և արդյունավետ ռազմավարության համար: Խորհրդային Միության փլուզումից հետո որոշ հնարավորություններ ստեղծվեցին Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականության ակտիվացման համար: Հաշվի առնելով ԻԻՀ պատմական և աշխարհագրական կարողությունները, կովկասյան տարածաշրջանի փորձագետները եկել են այն եզրակացության, որ այս հնարավորությունները բաց էին թողնվել ԻԻՀ արտաքին քաղաքականության մեջ: Իրանը չէր կարողացել տարածաշրջանում իր հատուկ դիրքը և առկա հնարավորությունները ճիշտ օգտագործել սեփական ազգային շահերը ապահովելու ուղղությամբ[9]:

---

[8] www.Ermenihaber.am

[9] Kulai, Elahe, Mizgerd: Siyasat Kharje Jomhuriye Eslami Iran nesbat be Mantaghe Asiyaye Markazi va Ghafghaz, Majalye Motaleat Khavarmiyane,

Հարավային Կովկասի տարածաշրջանում կարևոր է համարվում հարևանների հետ ԻԻՀ-ի հարաբերությունների հաստատման ձևը: Թեև Իրանը Ադրբեջանի հետ ունի ակնառու ընդհանրություններ, սակայն իր արտաքին քաղաքականության մեջ հետևում է Հյուսիս-հարավ առանցքին՝ Իրան-Հայաստան-Ռուսաստան կոալիցիային[10] ի հակադրություն, տարածաշրջանում արևելք-արևմուտք՝ Թուրքիա-Ադրբեջան-Ուզբեկստան-Ամերիկա առանցքի, որն առ այսօր շարունակում է մնալ որպես ռազմավարական առավել ավանդական դասավորություն:

Իրանի վերաբերմունքը տարածաշրջանի երկրների նկատմամբ հիմնված է բարիդրացիական հարաբերությունների վրա: Իրանը Կովկասում չի ձգտել հիմնել ռազմական բազաներ, ստեղծել լարվածություն կամ ձեռք բերել արտոնություններ, այլ տարածաշրջանում և հատկապես հարևան երկրների հետ նրա քաղաքականության նպատակն է եղել համագործակցության, խաղաղության և կայունության հաստատումը: Իրանը տարածաշրջանային դերակատարի դերում վարել է այնպիսի քաղաքականություն, որ խարսխվել է տարածաշրջանի երկրների ուժեղացման և հակամարտությունները ըստ միջազգային իրավունքի օրենքների լուծելու սկզբունքների վրա:

1991 թ. Խորհրդային Միության փլուզումից հետո սպասվում էր Թուրքիայի և Իրանի մրցակցությունը տարածաշրջանում՝ ազդեցություն ձեռք բերելու համար: Այն զգալի չափով իրականություն է դարձել, թեև երկու երկրների պաշտոնական շրջանակները ժխտում են այդ[11]:

Bahar, 1380 (2001), Shomarye 25, p. 9-10. http://www.ensani.ir/storage/Files/20120329161953-5098-1.pdf

[10] Cornell, Svante, Small Nations and Great Powers, A Study Etnopoltical Conflict in the Caucasus, 2005, p. 380.

[11] Philip Robins, 'Silent Competition: Iran and Turkey in Azerbaijan and Central Asia,' in Etniske Konflikter i Sentral-Asia of Kaukasus, Norwegian Institute for International Affairs, No. 172 (September 1993), pp 111– 23.

1992 թվականից Իրանի կառուցողական դիվանագիտությունը սկսվում է նորանկախ պետությունների ճանաչմամբ և դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ: Իսկ Լեռնային Ղարաբաղի հետ կապված հայ-ադրբեջանական հակամարտության հարցում ԻԻՀ-ը փորձեց միջնորդի դեր խաղալ: Սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևավորումից հետո Իրանը հրաժարվեց իր միջնորդական ջանքերից:

Իրանը դեմ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար արևմտյան խաղաղապահների ներկայությանը տարածաշրջանում: Հայաստանի և Թուրքիայի միջև հակամարտությունը կամ համագործակցությունը ոչ միայն ուղղակի ազդեցություն ունի Կենտրոնական Ասիայի և կովկասյան տարածաշրջանի քաղաքական ու անվտանգության հարաբերությունների վրա, այլ ազդեցություն կթողնի նաև Մերձավոր Արևելքից մինչև Եվրոպա միջազգային զարգացումների վրա:

Իրանը կովկասյան տարածաշրջանի հակամարտություններում, մշտապես ընդգծել է Հայաստանի հետ հարաբերությունների զարգացման խնդիրը: Իրանը եղել է Հայաստանի հիմնական տնտեսական և առևտրական գործընկերներից մեկը և Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պարենով ապահովող հիմնական մատակար[12]: Թուրքիան, մինչդեռ, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման հարցում միացել է Ադրբեջանին:

Այնուամենայնիվ, ԻԻՀ գերակայություն է համարել տարածաշրջանի բոլոր երկրների միջև տնտեսական համադրության /կոնվերգենցիայի/ ստեղծումը և անվտանգության ապահովումը: Եվ որպես տարածաշրջանային ուժային կենտրոն ձգտում է քաղաքական, տնտեսական, սոցիալական բարեկեցության, բարգավաճման և կապի միջոցների

[12] ‘Enclave Builds a Life line Out of Azerbaijan, ’International Herald Tribune, September 20, 1996.

ամրապնդման, տարածաշրջանի օտարերկրյա ներդրումների ընդլայնման և զբոսաշրջության զարգացման: Անշուշտ, այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է տարածաշրջանում անվտանգության ապահովումը:

2014 թ. Իրանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական փոխանակումների ծավալը կազմել է 293 միլիոն դոլ[13] : 2013 թ. Թուրքիայի՝ Հայաստան արտահանման ծավալն ավելի շատ է եղել Իրանից Հայաստան արտահանման ծավալի համեմատ: Հատկանշական է, որ այս իրավիճակը փակ սահմանների և քաղաքական հարաբերությունների բացակայության պայմաններում է կատարվել, իսկ սահմանների բացման դեպքում հայ-թուրքական առևտրատնտեսական ծավալը ակնհայտորեն բարձրանա:

Վերջին տարիների տնտեսական առաջնահերթությունները պայմանավորեցին քաղաքական, սոցիալական և մշակութային համագործակցությունների անհրաժեշտությունը: Եվ Իրանի դերը ներկա ներուժի ամրապնդման և վերանայման համար շատ կարևոր է Կովկասի երկրների հետ հավասարակշիռ քաղաքականության ուղղությամբ: Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան մշտապես ներգրավված են եղել կովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքականության և զարգացումների մեջ, ինչը Կովկասի երեք երկրների միջև անհավասարակշիռ իրավիճակ է ստեղծել: Իրանը և Ռուսաստանը Կովկասում ընդհանուր նպատակ են հետապնդում, այն է՝ կանխել Կովկասում Թուրքիայի և Արևմուտքի ներկայությունն ու ազդեցությունը:

Թեև Իրանը և Թուրքիան Սեֆյան ժամանակաշրջանում մրցակից երկրներ էին և տվյալ ժամանակաշրջանը լի էր պատերազմներով և բախումներով, բայց երկու երկրների հարաբերությունները Էրդողանի կառավարության հետ շատ սերտ էին: Իրանը միջուկային հարցում համաձայնվում է

[13] http://tnews.ir/news/7F4325030403.html

Թուրքիայի և Բրազիլիայի միջնորդությանը: Թուրքիան չնայած Ամերիկայի ընդդիմությանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում դեմ է քվեարկել Իրանի դեմ նոր պատժամիջոցների: Սակայն 2010 թ. հոկտեմբերի 15-ին Անկարան համաձայնվում է Թուրքիայում ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության վահանի տեղակայմանը, որը Իրանի դժգոհության պատճառ է դառնում: Հատկանշական է, որ Իրանի և Թուրքիայի առճակատումը, իսկ Ադրբեջանի և Արևմուտքի սերտ համագործակցությունը, հատկապես, էներգետիկ փոխանցումների ոլորտում, կհանգեցնի Հայաստանի և Իրանի էլ ավելի սերտ համագործակցությանը: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է Միջին Արևելքի վերջին քաղաքական զարգացումներին և Թուրքիայի որոշ դիրքորոշումներին ԻԻՀ հանդեպ, ապա Ռ. Մելքոնյանի գնահատմամբ. «Թուրքիան շատ զգուշավոր քաղաքականություն է վարում Թեհրանի հարցում…, իսկ Իրանի քաղաքական շրջանակներում Թուրքիայի հանդեպ ձևավորվել է բարի, սակայն սառը վերաբերմունք»[14]:

АРМЯНО-ТУРЕЦКИЙ КОНФЛИКТ И ПОДХОД ИРИ

Афсане Ширани
Мохаммад Малек Мохаммади

(резюме)

Схожесть и расхождения двух стран, связанные с актуальной темой, касающейся взаимоотношений РА и Турции, первоочередность и важнейшее региональное значение отношений, являющихся предметом проблемы, приводят к тому, что

[14] Մելքոնյան Ռ., Թուրք-իրանական հարաբերություններն այնքան լարված չեն, որքան թուրք-սիրիականը, 2012: http://www.panarmenian. net/arm/news/114673/

вопрос выходит за местные рамки и подпадает уже в контекст процессов геополитического развития. Поэтому в настоящей статье в первую очередь обсуждается современная политика Турции и новая стратегия относительно главной проблемы армяно-турецкого противостояния–геноцида армян. Рассматриваются также вопросы святого Корана и геноцида, правовая система ИРИ в отношении геноцида, подход и стратегия ИРИ относительно армяно-турецкого противостояния и стратегия национальной безопасности РА в отношении ИРИ.

ARMENIAN-TURKISH CONFLICT AND THE STANDPOINT OF ISLAMIC REPUBLIC OF IRAN

Afsaneh Shirani
Mohammad Malek Mohammadi

(summary)

The convergence and divergence relating to the interrelation of the two countries Republic of Armenian and Turkey with respect to urgent argument, the regional priority of interrelations subject to argument and the importance of the latter lead to the fact that the problem increases from its local regions and is viewed in the context of geographical-political developments. Therefore in this article first of all Contemporary politics of Turkey is discussed and the new strategy relating to the main issue of Armenian-Turkish Conflict on Armenian Genocide, then Saint Quran and genocide issues, the legal system of Islamic Republic of Iran on genocide, the point of view of Islamic Republic of Iran and strategy upon the Armenian–Turkish conflict and the strategy of the Homeland Security of the Republic of Armenia on Islamic Republic of Iran are under observation.